

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան զինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлисъ - Редакція «Мелкъ»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Վիճակային կոնստաբլիան Հայոց Վրաստանի և Իմերէթի ի գիտութիւն հայ
հասարակութեան ճիշդիւ կը ծանուցանէ թէ՛ առաջիկայ Կիւրակէի, որ է 12
Կեկտեմբերի, կը լինի ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱՆՆԱՅ ՄԱՅՐ ԱՌՈՒՈՒՄ Թաղումը Սրբազան
մարմնից Նորոգ ի Տէր հանգուցեալ Վեհափառ ԿԱՌՈՎԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ. Տ. ԳԵՈՐԳ ԿԻ: Եւ Վանսոց մայր եկեղեցում ներկայութեամբ բոլոր հայ հոգե-
ւորական դասու նոյն օրը 12 ժամին կը կատարուի հանգիստուր հոգեհանգիստ
Նորին Սրբութեան համար, սուրբ և անմահ պատարագից յետոյ:
Անդամ կոնստաբլիայի Մամբրէ վարդապետ:

2—2

ԲՈՎԱՆԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Մեծ պահանջներ: Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Արտաքին լու-
րեր: ՀԵՌԱՅԻՆՈՒԹԻՒՆ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Լուի Բլան:

ՄԵԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«Մշակ» № 229 մէջ տպւեցաւ Շուշուց
գլխավոր նամակը: Նամակի վերջը թղթակիցը
ատում է որ լաւ կը լինէր եթէ «Մշակը»,
մեր լրագրութեան մէջ միակ քննադատող,
մարտիկ լրագիրը, կարողանար շարժել
եօթ անգամ հրատարակել նոյն դիրքով,
կամ եթէ շարունակել հինգ անգամ հրա-
տարակելը դոնէ մեծացնի իր դիրքը: Գոնէ
մենք այսպէս հասկացանք մեր թղթակցին:

Այդ տեսակ պահանջներ մենք ի հարկ եւ
շատ գովելի ենք դնում, բայց հարցը
նրանումն է, թէ արդեօք իրադրո՞ւնք են
այդ տեսակ պահանջներ հայոց հասարա-
կութեան մէջ:

Շատ ցանկալի է, ի հարկէ, որ հայոց
ամենօրեայ թերթ, ինչպէս մի «Գօլոս» կամ
մի «Բուսիկ» կուրիէր հրատարակելը շա-
բաթը եօթ անգամ և տպւել այն դիրքով
այն մեծութեամբ, որով տպւում են մայրա-
քաղաքի ուսւ լրագիրները: Բայց դրա հա-

մար ինչ է հարկաւոր, դրա համար հարկա-
ւոր է ունենալ ոչ թէ 1,400 բաժանորդ, ինչ-
պէս ունի «Մշակը», այլ 8,000, նոյն իսկ
10,000 բաժանորդ, ինչպէս ունի «Բուսիկ»
կուրիէրը կամ 20,000 բաժանորդ, ինչպէս
ունի «Գօլոս»:

Ահա հայի պահանջները: Նա պահան-
ջում է որ 1,400 բաժանորդներով, որոնցից
շատերը ձգուածեամբ չեն վճարում իրանց
տարեկան 10 բուրն էր հայ խմբագիրը
հրատարակել մի մեծ թերթ «Գօլոսի» նը-
ման և հրատարակել նրան շաբաթը եօթ
անգամ:

Տուեցեք մեզ ոչ թէ տաս կամ ութ հա-
զար, այլ չորս հազար բաժանորդ, — և մենք
կը տանք հայոց հասարակութեանը շաբա-
թը եօթ անգամ մայրաքաղաքի ուսւ լրա-
գիրների նման մի մեծ թերթ:

Հասարակութիւնը եթէ կամենում է մեծ
պահանջներ անել իր գործողներից, այդ
պահանջներին համեմատ պէտք է և օգնու-
թիւն, նպաստ տայ, աջակցութիւն անի
այդ իր գործողներին:

Մենք դարձեալ չենք զանգատում, որ
հայոց հասարակութիւնը մեզ չէ համա-
կրում, մեզ չէ պահպանում, — ոչ, դա անար-
դարութիւն կը լինէր: Մենք կոչը չենք և
պարզ տեսնում ենք որ թէ անցեալ և թէ
ներկայ հայոց պարբերական հրատարակու-

թիւններից ոչ մէկը երբեք չէ ունեցել
«Մշակի» չափ բաժանորդների թիւ: «Մշա-
կը» ունի 1,400 բաժանորդներ, իսկ մնա-
ցած հայոց պարբերական հրատարակու-
թիւններ երբեք այդ թիւի կէտից, այն է
700 բաժանորդից աւելի ունեցած չեն:

Ուրեմն զաւարտացց է, դարձեալ որ
հայ հասարակութիւնը առանձնապէս հա-
մակրում է մեր լրագիրն և համակրում է
կրէի այն պատճառով, ինչպէս ասել է մեր
Շուշու թղթակիցը, որ «Մշակը» միակ քնն-
ադատող և մարտիկ հայոց թերթ է: Հա-
յոց հասարակութիւնը հասկացաւ, ուրեմն,
որ քննադատ, քննադատական, ամեն բան փա-
ռախտող, չօլկնիստական ուղղութեամբ
հնար չը կայ հասարակութիւնը դրդել
դէպի որ և է բարոյական կամ մտաւոր ա-
ռաջագիմութիւն: Գրականութիւնն ու մա-
թիւ մի հասարակութեան մէջ արձագանք
է հասարակութեան արամադրութեան: Իսկ
պատմութիւնից մեզ յայտնի է, որ այն բո-
ւականութիւնը երբ մարդկային որ և է հասա-
րակութիւն սկսում էր բարոյական ու մտա-
ւորական զարթոնք իր խոր քննից, — այդ ժա-
մանակ, որպէս արտայայտութիւն հասարա-
կութեան ներքին պահանջման, ծնվում էր
ինքնաքննող, քննադատող, մարտիկ ուղղու-
թիւն նոյն հասարակութեան գրականու-

թեան և մտաւոր մէջ:

Եւ այդ տեսակ արթնանալու բուռնութե-
ն հասարակութիւնը ինքն սկսում էր հետդ-
հետ զգուանք զգալ դէպի մամուլի քննա-
նող, փառաբանական, ամեն փոստ հնութիւն
փառաբանող ուղղութիւնը:

Առաջագիմութիւնը կարող է ծնվել մի-
մայն քննադատութիւնից, ինքնաքննութիւ-
նից, կրթութեան, մարտիկ ուղղութիւնից:
Իսկ չօլկնիստական ուղղութիւնը, որ ի-
րան նպատակ է դնում ամեն բան ինչ որ

«մեր» է, թէ կուզ այդ բանը հին, ան-
պէտք, փոստ լինի, անպատճառ գովել,
ժողովրդի ամեն վատ կրքերին, ստոր զգաց-
մունքներին, նախապաշարմունքներին, մոլե-
ռանդութեանը, խաւարաբորութեանն ու
հնարաբութեանը շողջորդել, — այդպիսի
ուղղութիւնը միայն ժամանակաւորապէս
կարող է գոյութիւն ունենալ: Նա ոչ թէ
միայն ընդունակ չէ ամեն ժողովուրդը դե-
պի առաջագիմութիւնը, բայց կարող է նոյն
իսկ ստանալ հասարակութեան մէջ ամեն
առաջագիմական ձգտումներ: Այդ տեսակ
ուղղութիւն ժամանակաւոր է, նա կարող է
գոյութիւն ունենալ շրջապատված լինելով
ազատութեամբ և խաւարով:

Բայց հենց որ կը ծագի լոյսի առաջին
ծնունդայինը, այդ ուղղութիւնը անմիջապէս
կանհետանայ, ինչպէս մի անշունչ ուրուա-
կան:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 դեկտեմբերի

Մի քանի ամիս ցանցից առաջ, մի խումբ ե-
րեստատորներ կազմված քանադայից, ուսուցիչ-
ներից, վաճառականներից, մտադրվիցան բանալ
Հաւարարում մի կանոնաւոր օրիորդական ուսում-
նարան, աչքի առաջ ունենալով՝ Հաւարարի հա-
զարաւոր հայ օրիորդների ուսման և դաստիարա-
կութեան կարօտութիւնը: Վերոյիշեալ պարաները
մի քանի տարի վիճաբանութիւններից յետոյ, հա-
մաձայնութեամբ վճռեցին բանալ Հաւարարում
ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու հովանաւորու-
թեան տակ ս. Հովհաննէան անունով օրիորդա-
կան ուսումնարան:

Այնպէս նոյնիմի ամիս 1-ին, Հաւարարի ժո-
ղովրդականները, բազմաթիւ տոնարարութեամբ,
մի խնդր ներկայացրին մեծ թիւական վերա-

թեան և գործարանների ու արհեստանոցների շա-
նի բանաւորներին հովանաւորող օրէնքների հար-
ցը: «Ինչե՞ք երեւաններին, ասում էր նա թողնում
են փշանալ, և զբաղվում են բարոյականացնելով
այլապէս մտղեղով աւագանքներին»:

Մամուլի ժողովուրդ և ընկերակցութեան ա-
զատութիւնը, բանկերի և կրեդիտի հարցերը, մի-
շէ անգամ կ'օրհնական և տեղական շաբաթների
հարցը — այդ բոլորը բաւական չէր Լուի Բլանի
ուշադրութիւնը լրովն սպասելու:

1839 թվին, որպէս կարծում են, Լուի Նաթո-
լեօնի գլխավոր, որի մի բրոշյուրի գլխի Լուի Բլանը
մի ստաւիկ կ'ուս պատասխան էր գրել, քիչ էր
մնում որ սա զոհ դառնար մի աւագանի երկաթէ
զլխով փայտի հարածին:

Հալւե ախարութիւնից փոքր ինչ ուղղված Լուի
Բլանը վերջերի կրկին գրել էր: Նոյն ժամանակում,
դուրս եկաւ նորա «Տարբարաւոր պատմութեան»
առաջին հատորը: Այդ գրութեամբ մեծ հասա-
րակութեան մէջ Լուի Բլանի անունը գրչապէս
պատմաբանի կ'ընթերցէ:

1846 թվին Լուի Բլանը ընտրվեցաւ պատգա-
մաւոր և յաջորդ տարին նա արքէն զէմբլիստու-
թեան, այսինքն հասարակ դասի պաշտպանող
մամուլական ամենից ընդունված գլխավորն
էր: Գալիս է 1848 թվականը: Այդ տարվայ 24
փետրվարի յեղափոխութիւնը վայր է ձգում Լուի
Ֆրիլի թաղաւորին. ժողովուրդը մի ակնթարթում
կազմել է ստալիս մի ժամանակաւոր կառավարու-
թիւն իրանից ընտրած մի քանի անձներից: Լուի

Բլանը այդ ժամանակ «Բեֆօրմ» լրագրի գրասե-
նակալն էր աշխատում ժամանակաւոր կառավա-
րութիւնը յանձնում է նրան քաղաքագրի համետ
պաշտօնը: Լուի Բլանին աշխուժում է այդ օրում
հրատարակել տալ մահաւան պատմի վերա-
ցումը: Լուի Բլանը ներկայացնում է տերութեան
խորհրդին և նրան ընդունել է ստալիս այն կար-
գադրութիւնը, որով տերութիւնը յանձն է առնում
բոլոր քաղաքացիների աշխատանքը և ամեն բան
ւորին աշխատանք տալով կենալը ապահովել —

Աշխատանք, այսինքն հայ պահանջող ժողովրդին
հանդիստ պահելու համար կառավարութեան ան-
դամներից մինը, Մարի, առաջարկում է, իբրեւ թէ
հետևելով Լուի Բլանի զարգացմանը, կազմել
«ազգային գործարաններ», որոնց թիւում վախ-
ճանք տեղի տուցի այլ կուսակցութիւններին այն-
քան ծաղրել Լուի Բլանի պնդանքը առհասարակ:
Ժողովուրդը պահանջում էր «Աշխատանքի մի-
նիստութեան» կազմութիւնը: Այդ պահանջմուն-
քը լրակատար ապրտի ձգեց ժամանակաւոր տե-
րութեան միւս անդամների վրա, որոնց աղաչելով
պազատելով յաջողվում է Լուի Բլանին համո-
զել, որ փոխանակ աշխատանքի միմիայնու-
թեան՝ կազմել հասարակաց հարցերը քննող մի
մամուլաւոր իր սեփական նախապահութեամբ: Լուի
Բլանը զիջեց հաստատ համոզված լինելով, որ իր
յամուրթիւնը այդ էջին վրա անկասկած մի մեծ
և արկնահաղ ապստամբութիւն պիտի առաջաց-
նէր: Մամուլաւորը աշխատում էր Լուսաւորչու-
գում, նա խմբագրեց բազմաթիւ օրէնքների պրո-
թիւն իրանից ընտրած մի քանի անձներից: Լուի

անտեսական ներկայ կենալի համար մի առանձին
նշանակութիւն ունի: Բանաւորների աշխատանքի
տեղութիւնը գործարաններում ինչպիսի 12 ժա-
մից 10 ժամ փարկի համար և 12-ից — 11 դուռա-
ների համար, բանաւորի, ցօսանքների և վանքերի
մէջ աշխատանքը վերացնել և դրն նրա տեղը՝
առաջնորդ, որի արդիւնքը պիտի դնար բանւոր
դասի արդիւնքի և հիւանդների համար կատա-
կաղմուտ. մի յայտնի դուռարին հասած՝ այդ տու-
գանքների արդիւնքը պիտի բանւորների խնայու-
ղական արդիւնք սեփականացնէր: Լուի Բլանը
զբաղվեց կոօպերատիւ աշխատանքների միու-
թեամբ կազմված արդիւնքների ընկերութիւննե-
րով, որոնց ստանդարտը համար նա տերութիւնից
տարեկան օժանդակութիւն պահանջեց և ստացաւ:
Յիշե՛ք, որ այդ ընկերութիւնները, ընդհանուր
վերջորած, չափողվեցան, թէ ինչու, այժմ տեղը չէ
մեկնելու: Ասկայն դեռ այն ժամանակից անբու-
թեան օժանդակութեամբ ստեղծված ընկերութիւն-
ներից մի քանիսը, որոնք աշխուժում են, կարո-
ղացել են մինչև այժմ դեռ մնալ:

Միւսները, այսպէս Լուսաւորչու պաշտատմ
խաղաղ կերպով բանաւորների նոր օրէնքագրութեան
էր խմբագրվում, այլուր Լուի Բլանի հակառա-
կարները իրենց սղաններն էին առաջադնում:
Նոյն մի խումբը զորքերի օգնութեամբ կտրում
է խորհրդարանի դռները և սպասում է Լուի
Բլանին և նրա դրժակիներին: Մեծ աղմուկ և
շփոթութիւն ծարրվի մէջ: Գրաւ հակառակ, բան-
ւորների կուսակցութիւնը անսահման էր յղցել և
հասցնում ձայնը մինչև կառավարութեան խոր-

Ի Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԼՈՒԻ ԲԼԱՆ

(Հարուստութիւն և վերջ *)

1839 թվին յունվարից Լ. Բլանը սկսեց հրատա-
րակել քաղաքական, հասարակաց և գրական «Յա-
ռաջագիմութեան» Հանդէսը:

Այդ հանդէսը մի կայծ էր, որ Լ. Բլանը նա-
խադրեց ընդհանուր ընտրողութիւնների կարեւո-
րութիւնը: Այդ հարցում նա յետ չը մնաց Լէդ-
րի-Բօլլենից, որը ընդհանուր ընտրողութիւնների
հիմնարկութեան առաջնադէմ էր:

Շեփոխի հետ միասին Լուի Բլանը կուռեց
կոօպերատիւ այն ժամանակ գոյութիւն ունեցող
տորիկութեան վերացնելու համար:

Կանանց քաղաքական գրութեան վերանորոգու-
թիւնը, ազատագրանի և ազօրին ծնվածների
համար այժմ արդէն մտցրած հիմնարկութիւնը, ու-
րով նրանք անկասկած կորուստից ազատվում են,
— սրանք կազմում էին մի այլ կարգի հարցեր,
որոնց լուծելու համար Լուի Բլանը ցույց էր տա-
լիս նախապաշարմունքների դարմանալի կատա-
րեալ բացակայութիւնը:

Յետոյ գալիս են յանդուրանքի բարոյականու-
թիւնը ուղղելու գործադրված սխտանք և դրա
հետ սերտ կապով կապված ընդհանուր կրթու-

*) Տես «Մշակ» № 223

տեսուչ պ. Բարխուդարեանցին, ուսումնարան բա-
նալու իրաւունքը ստանալու համար: Մեծ. պ.
Բարխուդարեանցը յարգելով հաւաքարդների խն-
դիրը, նոյն ամսին 2-ին պաշտօնապէս գրեց արժ.
Գրիգոր քահանայ Մանդակունուն, որ ծանուցու-
մին անի Հաւաքարի ժողովրդին հոգաբարձուների
ընտրութեան համար: Նոյն թվերին 5-ին, ներկայու-
թեամբ մեծ. թեմական տեսչի, Հաւաքարի ժո-
ղովրդականներից, դադանի քուէարկութեամբ, ըն-
տրվեցան երեք հոգաբարձուներ պ. պ. Սարգիս
Նիկողոսեանց, Գեորգ Թաթևեանց և Աղասի
Մելիք-Ալվազեան: Այնուհետև թեմական վերա-
տեսուչ պ. Բարխուդարեանցը բարեհաճեց պաշտօ-
նապէս հաստատել վերոյիշեալ հոգաբարձուներին
երեք տարի ժամանակով և ուսումնարանը յանձ-
նեց հոգաբարձութեանը:

Հոգաբարձուները ձեռնամուխ լինելով աշտպիսի
մի ծանր հասարակական գործի մէջ, առանց մի
կօպէկ դրամալիքի, կարեւորելով իրանց սեփակա-
նութիւններից մի ժամանակուր դրամալիքի, որ-
պէս զի սկզբից այդ դրամալիքով կարողանան
շարունակել իրանց գործը: Ուսումնարանի համար
վարձակցաւ տիկին Նադարեանցի տունը տարեկան
300 ռ., պատարտովեցան ուսումնարանի համար
նոստարաններ, բոլոր կահ-կարասիքներ և ուսում-
նական զանազան պիտուցքներ: Հրաւիրվեցան ու-
սումնարանի համար հետեւեալ յարգելի ուսուցիչ-
ները, որոնք և գրաւոր կերպով խոստացան մի
տարի ձրի դաստաւութիւն անել Հոփիսիմեան օր.
ուսումնարանում՝ արժ. Գրիգոր քահանայ Մանդա-
կունի, արժ. Վաղարաւ քահանայ Գովսէփեան, արժ.
Յովհաննէս քահանայ Տէր-Վարդէրոսեանց, պ.
Աւետիս Գուլլակեանց, պ. Բաղդասար Զարեղեանց
և վարժուհի օր. Որոյնանց, իսկ երկու վարժուհի
էլ պէտք է նորից հրաւիրել: Հոգաբարձութիւնս
իր առաջին նիստում նշանակեց աշակերտութիւն
թոշակները, տարեկան 25 ռ.—20 ռ.—15 ռ.—
10 ռ., իսկ տասնից երկուսն էլ ձրի: Թոշակները
չորս կարգի բաժանելու պատճառը այն է, որպէս
զի Հաւաքարի ստոր դասակարգ ժողովրդի համար
հեշտութիւն լինի: Հոգաբարձութիւնս նմանապէս
նշանակեց ուսումնարանի համար բարեբար սոս-
րադրութիւններ վճարը, 1) մշտնջենաւոր պատուար
անդամ միանուագ 100 ռուբլի, 2) պատուար
անդամ տարեկան 10 ռուբլի, 3) բարեբար անդամ
տարեկան 3 ռուբլի: Ներկայից նիստում հոգաբար-
ձութիւնս համաձայնութեամբ ընդունեց հանդերձի
ձեռք, մեկտեղեց չընդգրկուող (գերեաց), զբաղեց-
նելի վրա մի ընթացիկ (վերջի) լացութեամբ
կապտապոյն շերտ, երկու կողմից մեղ կարմիր
(МАЛИНОВА) ժապակեմանով, սե զոյնոց և սպի-
տակ թիթիկոց: Վճարեցաւ և աշակերտութիւնների
ընդունելութիւնը անցեալ նոյեմբերի 12-ից, ինչ-
պէս էլ լրացնելու միջոցով յայտնված էր, որ մինչև
այսօր ընդունվել են ուսումնարանում 93 աշա-
կերտութիւններ:

Ներկայ ամսին 5-ին, կիրակի օրը, առաւօտեան

հարցը: Նոյն պահանջում են զօրքերի հեռանա-
լը և ազգային ժողովի պատգամաւորների ընտ-
րութեան յետաձգութիւնը:

Այդ անցքը անցնում էր նոյն իսկ խորհրդի
դահլիճում և խօսողը Բլանքին էր: Կառավարու-
թեան կողմից նորա պատասխանողը միայն Լուի
Բլանքը կարող էր լինել, սակայն սա, տեսնելով
որ բանուր դատը զօռ է բանեցնում և ուղաու-
նալիք, աղաչում է Բլանքին խաղաղվել և են-
թարկել հասարակաց կարծիքին, որը հակառակ
էր Բլանքի պահանջանքներին: Այդ այն ժամանակն
էր, որ բանուր դատի ժողովրդական պատգամաւոր-
ներից մէկը քայլում է դէպի Լուի Բլանքը և բար-
կութեան ու յանդիմանութեան ցաւաւ ձայնով
գրչում է «Պոն էլ, ուրմն և դու դաւաճան ես!»,
Սակայն, մի ձառից յետ, որ Լուի Բլանքը նոյն
ժամում աղաւաղում է, ուր նա չնորհալարու-
թիւն է առնում բանուրներից, որ սքաւ իրանց
զանդաւորները յայտնեցին, ցոյցեր անողները, եր-
ջանկացած իրենց նախապաւտած մարդու տեսնե-
լով և առանց հաշի տալու իրենց նորա խօսքերի
պաւտանակութեան վրա, ցրվում են կրկին և մը-
նում իրենց աները:

Այն ինչ պատահում է յետոյ զօրքերի փարկ
կանչելը, ժամանակաւոր տէրութեան անդամների
կրկնակի ընտրութիւնների ընդհանուր ընտրու-
թիւնների հիման վրա, Լեհաստանի հարցի յան-
կարծակի առաջնից դաւը, Լուի Բլանքի մեղադրան-
քը, վերջապէս յոշնիս ամսվայ սարսափելի կոտոր-
վածքը,—այս բոլորը անցքեր են, որոնք Լուի
Բլանքը միայն խաղաղվում է առանց որ նա կա-

12 ժամին կատարվեցաւ Հոփիսիմեան օր. ու-
սումնարանի հանդիսաւոր բացումն: Բաղմաթիւ
ժողովուրդը ներկայ էր ս. Գրիգոր Լուսաւորչի և
կեղեցում. պատարաւը վերջանելուց յետոյ, հայր
Մանդակունին մի աղաւ քարով խօսեց, որ լաւ
տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա:
Այնուհետև քահանայները զետեւաւորված երեցո-
ղութեամբ հանդիսականների հետ գնացին ու-
սումնարանատունը, ուր կատարվեցաւ օրհնու-
թեան հանդէսը: Օրհնութիւնը վերջանալուց յե-
տոյ, մեծ. պ. Բարխուդարեանցը մի կարճա-
ւօտ ձառով բացատրեց ուսումնարանի նպա-
տակը և ուսման նշանակութիւնը, որ բոլոր
հանդիսականները ծախանարութեամբ յայտնեցին
իրանց չնորհալարութիւնը: Ուսումնարանի համար
ընտրվեցան երեք ինստակաւորներ. պ. պ. Ալէքսանդր
Անանեան, Ալէքսանդր Մանթաւեան և Յովհան-
նէս Չիթախեան, իսկ մեծ. պ. Արտեմ Գ.
յանձն առաւ ուսումնարանի ջուրը ձրի տալ,
իր սեփականութիւնից, ուսումնարանը բաց-
ված օրից, մինչև որքան գոյութիւն կունենայ:
Սարկաւադուհի կոչս Թաթևեանցը նուրից ուսում-
նարանին կոչս Հոփիսիմեի պատկերը, որ գեղեցիկ
նկարված է: Հանդիսականներից անդամակցա-
կան վճարները ժողովրդեաց 679 ռուբլի, պ. պ.
Ալէքսանդր Անանեանց 100 ռ., Ալէքսանդր
Մանթաւեան 100 ռ., Գեորգ Մ. Զակո-
բեան 120 ռ., Յովհաննէս Լուսիմեանց 150 ռ.,
իսկ մնացեալները երկուրդ և երկուր կարգի ան-
դամ ստորադրութիւններ են, և որոնց թւումն բա-
ցի անդամակցական վճարից, աւելորդ նուիրութիւն
չառ եղան: Յորտանս երկարացաւ, մնացեալ միւս
անդամ:

Մեծապատիւ խմբագիր, ինչպէս որ ամեն մի
հասարակական գործի մէջ միշտ ձեռնամուխ էք
եղել ձեր թարմ գաղափարներով՝ հրաւր կարդա-
լով ժողովրդին դէպի մի աղբորոտ գործը, և վա-
յելել էք ժողովրդի համակրութիւնը, որովհետև
«Մշակը» միշտ կանգնած է եղել ժողովրդական
հողի վրա, այս նորաբաց Հոփիսիմեան օր. ուսում-
նարանը մասին էլ, խնդրում ենք, նուրից մի ա-
ռաջնորդող յօդուած:

Աղասի Մելիք-Ալվազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՐ

Լուսմ ենք որ կաթողիկոսի թաղման հանգիսին
ներկայ գտնվելու համար կովկասեան կառավա-
րութեան կողմից ուղարկվում է իշխան Եղան
Թումանով: Թիֆլիսի հայոց հիմնադրութիւնները,
ինչպէս Ներսիսեան գալուց և Գալսեանեան ուսում-
նարանը և այլն, ուղարկում են իրանց պատգա-
մաւորներին Վեհափառ թաղմանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՐ ԵՐԱՐԻՆԵՐՈՒՄ ՀՐԱ-
տարակիւմ է պետական խորհրդի Բարձրագոյն

բաղման մի ձեւերիտ դեր խաղալ: Հալաւակորդ-
ներին յաջողվում է Լուի Բլանքին հաղթելու կար-
գաւորութիւնը կառավարութիւնից ստանալ: Լուի
Բլանքը փախչում է Ֆրանսիայից դէպի Բելգիա և
համարում Լճուծն:

Լուի Բլանքի քարոզները տեղի ամբողջ քան
երկու տարի: Նա վերադարձաւ Ֆրանսիա, երբ
Նապոլէոն III 70 թվին պիտի Անգլիայում ա-
պատանաւ որոնել, չը նայած որ կայսրը դեռ
1858 թվից ընդհանուր ամենափառ, յանցանքների
թողութիւնն էր յայտարարած: Արտարարելի սկզբի
տարիներում Լուի Բլանքը հրատարակեց բազմաթիւ
բրոշյուրներ մեղադրանքներից իրան պաշտպանելու
համար. հիմնեց մի ամսագիր «Նոր Աշխարհ» ա-
նուամբ, հրատարակեց մի գրվածք սօցիալիզմի,
ընտանեկ բեֆօրիսմի վրա և այլն. մտաւ Պրուդոնի
հետ մի յամառ պոլեմիկի մէջ և այլն: Բայց յե-
տոյ, տեսնելով իր աքաղաղելի երկար տեւելու
անհրաժեշտութիւնը, նա նուրից իրան տեւել մեծ
դրաւոր աշխատանքներին: Քառասուն թուական-
ների սկզբին նա սկսել էր գրել «Ֆրանսիական
յեղափոխութեան» պատմութիւնը: Այդ աշակի
գործի վերջին հատորը հրատարակեց 1862 թը-
ւին: Այդ աշխատանքի մէջ նա անդադրում բայց
տեւեցնեց մի և նոյն ժամանակ, անարդար կեր-
պով հարուստում է այն օյժով 1799 թվի բուրժու-
ապիպային, որպէս նոյն բարձրագոյն 1830 թուա-
կանին: Ամեն կուռակցութիւն, որը չէ բլված ժա-
նակ Բուսսօի գոփորիներէր նա դատաւար-
տում է մի անկէքով: Լուի Բլանքը դրանով ու-
ղում է 1793 թվի կռիւկներին կռիւմ կառա-

վաւերացած հետեւալ հրամանը: Թիֆլիսից
պատերազմի ժամանակ Ներսիսեան հաճանքը դադ-
րած հայ և եղիկ ընտանիքներին տրվում է,
սկսած յունվարի 1-ից 1881 թվի, վեց տարեկա
արտօնութիւն արժեւանական հարկերը չը վճարելու,
իսկ երեք տարեկա արտօնութիւն համախմբի հար-
կերը չը վճարելու: Յիշեալ գաղթականներին դրա-
մական օժանդակութիւն պետական զանաւարանից
տալու համար, ոչ աւել, քան 85 ռուբլ իւրաքան-
չիւր ընտանիքին թէ բնակարանները չլինելու, թէ
դաշտերը ցանելու և թէ երկրագործական գործիք-
ներն ու սոււար առնելու համար, նշանակված
պետական զանձից 30,215 ռուբլ:

«Մշակի» անցեալ համարում տպեցինք Կ. Պոլ-
սի մեր աշխատակից Հայկակից ստացած փոքրիկ
նամակը, որ կատարեալապէս հաստատում է այն
հեռագրի մէջ յայտնված բոլոր, որ մենք նորե-
րում տպեցինք «Մշակի» մէջ:

«Моск. Телеграфъ» լրագրում կարդում ենք
որ շատ ժամանակ չէ կովկասի մի բնակիչ Արու-
թիւնով դատ էր բացել արտաքին գործերի մինիս-
տրութեան դէմ, պահանջելով վերադարձնել իրան
2,160 թուման արարից փող, որ նա, Արութիւնով
փոխարինարար տուած էր ուսուցչ նախկին հիւ-
պատուին Պարսկաստանում պ. Բէգօրազովին:
Մինիստրութեան ներկայացուցիչ Անդրէյեւսկի
յայտնեց որ ոչ թէ մինիստրութիւնը, այլ ինքն
Բէգօրազով պէտք է վճարէ այդ պարտքը,
բայց Պետերբուրգի նախնական դատարանը ո-
րոչեց. պահանջել արտաքին գործերի մինիստրու-
թիւնից, յօդու Արութիւնովի 7,854 ռ. սոկոս-
ներով 1874 թվից սկսած և դատաւարական
ծախսեր 590 ռ. գումարի չափով:

ԲԱՐՈՒԻՑ մեղ գրում են: «Ինչպէս յայտնի է
Նօրեւ և Միլոզեանց ֆիրմաները առաջին ան-
գամ հնարեցին նաւթից ժամեր պատրաստելու
միջոցը: Այժմ, ինչպէս լսում ենք, պարսիկները
արտօնութիւն են խնդրել կառավարութիւնից կա-
ռուցանել գործարան և մոմեր շինելու մենապա-
ճաւութեան իրաւունք ունենալ»:

Մեղ գրում են Բագուից և հետեւալ: «Նոյնի-
քեր 2-ին տեղին Մարդասիրական ընկերութիւ-
նը տուեց իր դահլիճում մի ընտանեկան երեկոյ,
հանդերձ վիճակահանարով: Հանդիսում բաական
բազմութիւն կար և ինքն հանդէսը լաւ անցաւ:
Զուտ արդիւնքը մնացել է 629 ռուբլ 55 կօպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՍՏԱԿ ԱՆՍՏՐԻԱՑԻՑ
Վիեննա, 1 դեկտեմբերի
Վիեննայի լուսանան արուեստագիտաց ընկե-
րութիւնը նոյեմբերի 7-ին մի յատուկ յայտարա-

վարութիւնը վարդանել, նորա բոլոր դատաւոր-
թիւնները ձգտում են մի բանին՝ ցոյց տալ Բ-
րեյտիկերի արարածներին դեղադնդուցութիւնը:

1857 թուականից Լուի Բլանքը սկսեց հրատա-
րակել իր «Նամակները Լճուծին», որտեղ նա
խօսում է Անգլիայի քաղաքական հիմնադրութիւն-
ների, հասարակաց և ընտանեկան բարք ու վարքի
վրա և այդ բոլորը մի գրչով, որը համարում է իր
հասարակ ոճի կողմից վերին աստիճանի կատա-
րելութեան: Նամակները Լճուծին, այժմ հրատա-
րակված առանձին հատորներով, համարվում են
Լուի Բլանքի ամենապայծառ գրվածքների թւում,
նորա «Տասը տարեկա Պատմութեան» չաբքում:

Լուի Բլանքը գրել էր նաև մի այլ գիրք «Ֆր-
անսիայի տալճները սոս և ութերորդ դարում»,
մի գրվածք, որը զիջալիցապէս փարկի պաշարման
ժամանակ 1871 թվի ութերորդութիւնից պատճա-
ռած մի հրդեհին է դոհ գնացել: Հասարակութիւ-
նը կարող էր գնահատել Լուի Բլանքի տաղանդը
այդ տեսակ գրվածքների եղանակում այն դատա-
խօսութիւնով, որ հնդկական կարգաց 1878 թվին
Վիկտոր Հիւգօի նախագահութեամբ կազմված մի
ժողովի մէջ նոյն առարկայի վերաբերեալ: Նրին
նրա դատախօսութիւնը մի կտոր էր նոյն կորած
գրքից և, ինչ դատախօսութիւն! դա մի երջանիկու-
թիւն էր մնալ նորա և պարզ և վեհ և նուրբ ո-
ճի հիացք տիւրող աղբիւրութեան տակ:

Արտարարելի մէջ նա պատկերեց մի գերմանուհի
օրիորդ Արիստինա Գրոնի հետ, որը իր ամուս-
նուն բերեց իբրեւ բաժին այն բոլոր յատկութիւն-
ները, որոնցով գերմանուհի կանայք սովորաբար

լուրթեամբ հրաւր կարգաց, որ նոյն ընկերութեան
անդամակից և արուեստակից պարսնայք ներկայ
գտնվին երեկոյեան ժամը 8-ին, կայսերական
բաղմանութեան Ալալէմիայի լուսանկարների
սեպհականում Grunen Saal (կանաչ դահլիճ) ա-
նուն պահում, ուր մի օր առաջ հռչակաւոր լու-
սափայ արուեստագէտը դրած տնկին իրանց և-
րեսը ձերթիցնող ճարտարագործ աշխատութիւն-
ները:

Արուեստի կատարելութեան մրցումը և գերա-
զանցութիւնը լաւ է գնահատում Նւրոպան, ոչ մի
ժամանակ անտարբեր և ապրիպիտ չէ գտնուած,
ուստի նոյն պիչերը գերադասեալ հանդիսացող լու-
սափայ պիտի հռչակուէր, միմիայն պատուով
պիտի լուսաւորուէր, իսկ ոսկի շքադրամի մրցա-
նակի (Médaille d'or) վարձատրութիւնը այս ան-
գամուան համար չէր, նախկին ժողովում արդէն
մի արուեստագէտ արժանացած լինելով այդ փառ-
քին:

Հօգով մարմնով Հայաստանի աւերակներին ան-
ճը նուիրած, նախ քան ձերանալը մարկին սպիտա-
կացած, հռչակուէր, անուն ստանալ և այլոց նը-
ման իրաւացի պահանջները փառաւորութիւն հա-
մարկով կարծես միշտ համեստութեան մէջ ապ-
րելու ինքզինքը դատապարտած հայ ազգի լուսա-
նկար պ. Քիւրքեանը մի քանի ամսից ի վեր
Վիեննա է բնակվում: Նթէ Անիլերը անուանով պա-
լատական երեկելի մի լուսանկար Քիւրքեանի
պատկերները պատահմամբ տեսած չը լինէր, և
պատկերները ժողովին ներկայացնելու համար նը-
րան համոզելու չը ջանար, և «ձեր պատկերները
հիմաւի են, սքանչելի են, անման են, դուք
անկասկած ըստ արժանւոյն կը պատկըլք» չասէր
և չը թախանձէր, եթէ ոչ ապագայում, գոնէ այս
տարի այս բախտաւորութեանը չէր արժանանալ
Քիւրքեանը: Անա այսպէս սկսաւ Վիեննայում
Քիւրքեանի աստղին փայլելը: Անա մի քայլ որ
կը խոտանայ ընդհանուր Նւրոպայում Քիւրքեան-
ին հռչակել տալու: Անա հայ արուեստագէտի
տաղանդը, ընդունակութիւնը Վիեննան գնահա-
տեց: Վարքը պէտք է զայ միւս լուսաւորեալ աշ-
խարհներին:

Քիւրքեանի վրա առաջին անգամ հիացող պա-
լատական լուսանկար Անիլերը տարաւ նրան և
ներկայացրեց ընկերութեան նախագահ Հորնիկին,
որ է նաև Ալալէմիայի քիմիայի պրօֆէսոր: Պատ-
կանելի ձերեւանի աչքերը մերթ պատկերներին,
մերթ Քիւրքեանի երեսին բեռնած, կարծես ապ-
շած, չըթմնեցները կը չարթէր և մի բան էր ու-
ղում ասել, ասաց վերջապէս, այսինքն չը բաւա-
կանացաւ «հիմաւի, սքանչելի» բառերը գործա-
ծելու, այլ ասաց, թէ ոչ միայն Վիեննայում, մի-
չև անդամ համաշխարհային լուսանկարական
չըջանում այսպիսի պատկերներ եւ չեմ տեսել:

Պրօֆէսոր Հորնիկը հնարակաւրութեան յայտնեց
Անիլերին որ մի վրա է արել և միանգամայն
պատճառ է եղել այս տեսակ հաղաւթիւտ պատ-

չապում են իրանց ամուսնուն, սէր և հիացողու-
թիւն, անձնանկրութիւն և անտեսականութեան
հասկացողութիւն:

1871 թվի փետրվարի ընտրողութիւններին փա-
րկը ընտրեց Լուի Բլանքին որպէս առաջին պատ-
գամաւոր (Փարկըր ընտրում է 20 պատգամաւոր-
ներ): Նրա ստացած ձայնը համարում էր 216,000
և Տիէրի ու Գալիսեոտայի հետ միասին Լուի Բլա-
նք այդ կրկնակական բողոքներում ամենապայծա-
ւոր մնալին էր: Չը նայած դրան Լուի Բլանքը չը
կարողացաւ գործելու բողոքներում արդարացնել
այն հաւատը, որը ընծայում էր նորան փարկի
քաղաքը: Քաղաքացիներին մեծ և դարձուրելի կո-
տորածներին ժամանակ փարկի փողոցներում,
1871 թվին, Լուի Բլանքը չուղեց միջամտել յօ-
դուտ փարկեցիներին և մնաց Տիէրի հետ Վեր-
սայի ժողովում: Այդ ժամանակից սկսած Լուի
Բլանքը կրկին մտնում է մութը դերի մէջ: Չը
նայած որ նա անուանով մնացել էր մինչ իր մահը
ծարանից Գլուսակցութեան պետ, չը նայած որ
քուէներին մէջ նա միշտ համապատասխան էր այդ
կուռակցութեան պրօգրամին, չը նայած իր թըն-
նամութեան Սկեստի հիմնադրութեան դէմ, որին
այդ կուռակցութիւնը միանգամայն ուղում է վերց-
րած տեսնել Ֆրանսիական կառավարական սիւս-
տեմից,—ամեն մարդ արդէն զգում էր, որ Լուի
Բլանքը իր դերը արդէն խաղացած վերջացած էր:
Լուի Բլանքը մեռաւ 79 տարեկան հասակում:
Նա անժառանգ է:

կերտելով զարգացող կանաչ սրահը, և խնդրեց որ պատկերները անմիջապէս հանդէս բերուին: Պատկերներն արուեստական կառուցելովներ և նորոգելներ այնքան անհատապէս կերպով գերազանց էին որ կատարածանայ տեղի չը տալու համար, Անկլերը՝ Քիւրքեմանի տղային կլիշէներն յատուկ և մէջը լապտերներ դրուելու եղանակով չըջանալներ շինել տուած էր, որպէս զի հանդիսատես արուեստագէտը պատկերներն հետ ի մի տալին կլիշէներն էլ ականատես լինին:

Ժողովը գումարեւած էր այն գիշեր ի ներկայութեան ատաղանդաւոր բարձրակրթ լուսավար աշակերտաց, ներկայ էին ի միջի այլոց Վիկտոր Կարապետ, Լուսաւոր, Լեւոն, Ալեք, Անկլեր, Քիւրքեման, Ռոմար, Պոլոսի, Օսկար Քրամեր և այլն: Նախ քան հրապարակեց գումարեւորը և ժողովին բացվելու պէտք էր տեսնել Քիւրքեմանի թափած քրտինքը: Բնկերը, մօրուսը, մայրը միմեանց խառնուած, իր ձեռքը պատկերները կախում էր իրան համար յատկապէս շինուած եռանկի վաղորդակ և կոտակապտ մեծ տախտակին վրա: Տախտակին առաջը, աջ և ահակ վաղվում էր պատկերները վաղորդ և յարմար կէտերի վրա տեղադրուած համար: Կարծես խաբարնայի պատկերը իր արիւնը, իր հողին, իր երկնայնիքը լինէին, այնպէս նրանց վրա դուրս գալով խնամք ցոյց կը տար: Պատկերացոյց տախտակին երկու կողմը գետնի վրա խափայն խողովակներով շարժուող գալի լոյսերը յետ և առաջ կը տանէր լուսաւորութիւնը չափաւորութեան համար: Իսկ միւս կողմի վրա տեսնու արժանի բան էր պարտական լուսանկար Անկլերին Քիւրքեմանի ապակի կլիշէներին և նոյա լապտերներն ցոյց տուած մանրակող ուղարկութիւնը, կարծես իր տեսնական աշխատութիւնները լինէին կամ դոյա պատին ու փառքը իրան պատկանէին: Տվարիւնն ասելով այդ աղին մարդուն Քիւրքեմանի թէ անձին և թէ դործին ցոյց տուած համակրութիւնը նկատելի և զարմանալի էր: Վերջապէս ամենայն ինչ պատկաստուեցաւ և հետզհետէ սկսան սրահը մտնել ընկերութեան նախագահ պրոֆէսոր Հոլմերի, ընկերութեան քարտուղար անուանի լուսանկար Լուսաւորը և միւս արուեստակից անդամները:

Ժողովը բացուեցաւ նախագահ Հոլմերի համառօտ մի ատենախօսութեամբ, որուն յաջորդեցին Օսկար Քրամեր և Լեւոն լուսանկարաց քննադան տեսակ նորահար լուսարուեստական իրաց բացարձակութիւնները: Անուանեալ կարգի եկաւ Քիւրքեմանին: Ներկայ հանդիսութեան քննադանը բարձր խում էին թէ ինչ պէտք է ասեն, ինչ ընդունելութիւն պիտի գտնեն Քիւրքեմանի դործերը: Նախ պրոֆէսոր նախագահ Հոլմերը մասնաւորաց արաւ Քիւրքեմանի հանդէս դրած աշխատութիւնները, ասելով. «Ան երևանցի հայ լուսանկար պ. Քիւրքեմանի դործը, որուն համար մեր ընկերութեան ատենադիրը պ. Լուսաւորը պիտի բարձրաձի նրա կողմից ի վեր անուանած տեղեկութեան թարգմանութիւնը կարգաւ:

Ընդհանուր ակնաճը լարուեցան: Լուսաւորը սկսաւ կարգաւ տեղեկացնել, որ մանրամասնաբար դրուած կար թէ ինչ պայմաններով, ինչ միջոցներով, ինչ դժուարութիւններով, բացօթեայ և անապատացեալ տեղերում, զուրկ ամենայն տեսակ պահանջներից՝ նկարուած էին այն պատկերները: Լուսաւորը վերջապէս ծանուցաւորին ընկերացանութիւնը և նոյն միջոցին որոշուց սրահը և ուսկի ծափահարութիւնները ու լրացմանը զարգացրին դասիկը: Ընդունելութիւնը ամենակատարեալ էր: Քիւրքեմանը շարունակ ոտքի վրա կանգնած զուրկ տալիս էր ինչպէս հնորակարութեան, անչափ էր ներկայ գտնուող հայերին էլ սրտի ցնծութիւնը:

Այլոց լուսանկար արուեստագիտաց աշխատութիւնը և հնարագիտութիւնը հետզհետէ ըստ կարգի բացարձակեցան և զովստաների արժանապատ, բայց Քիւրքեմանի պատկերների տարաւորութիւնը մեծ էր, այնպէս էլ մնաց:

Ժողովը փակուեցաւ: Նախագահն ու ատենադիրը իման ամբիօնից և ուղղակի Քիւրքեմանի մօտը դալով ձեռքը սեղմեցին, հնորակարիցին իր յաջողութիւնը, ասելով թէ այսպիսի մի աշխատութիւն չը գնահատուի չէր կարելի:

Քիւրքեմանը լինելով ինքնահամառ մի մարդ, արդէն դիտած պէտք էր լինէր իր աշխատութեան կատարելութիւնը, սակայն կարծես նոր էր խնայել, այնքան զեղքը դուարթ, պայծառ, սիրտն էլ զոհ և ուրախ էր, որովհետեւ տաղանդը

որքան էլ բարձր լինի, համը և աղը աւելի ուրիշ: Ներքից դնաճատուելու մէջն է:

Այժմ դժուար է նկարագրել այն բոլոր, որ բոլոր արուեստագէտը չըջապատեցին Քիւրքեմանին: Այլ ևս գերմանական լեզուի բառարանին մէջ անգամ չը մնայ, որ չը տեղացնէին Քիւրքեմանի գլխին:

Մինը ասում էր թէ՝ «Ինչպէս էք շինած այդ արուեստը, դուք ճիշդն բաղմանմուտ արուեստագէտ էք, ինչ է ձեր բաղադրութեան գաղտնիքը, ինչքան գեղեցիկ և նորը են ձեր պատկերները»: Մի ուրիշն ասում էր. «տուէք ինձ ձեր բաղադրութեան բանալին, ես կը դնամ փարկ և manipulation անելով կը ծախեմ ձեր բաղադրութիւնը: Իսկ ուրիշ մէկ ասում էր. «Ինչի այդ գաղտնիքը ի լոյս չէք ընծայել յանուն մեր արուեստի յառաջդիմութեան և այլն և այլն»: Քիւրքեմանը արանց որ մէկին պատասխան տալուն մէջ շուրջած ժպտում էր և թարգմանի միջոցաւ ասել տալիս էր, որ կարգը կը գայ, իմ բոլոր դործերի մանրամասնութիւնները կը հրատարակեմ:

Նոյն միջոցին մի լուսանկարի ներկայացուցիչ ինձ մօտեցաւ և հարցրեց թէ «դուք էք արդեօք Քիւրքեմանը»: Քիւրքեմանը նոյն բոլոր սրահին մի անկիւնում թարգմանով խօսում էր Անկլերին հետ: Ես էլ պատասխանեցի. «Ոչ, ես չեմ Քիւրքեմանը, անաւան ինքը Անկլերին հետ խօսում է»: «Միթէ դա սե մարդն է» ասաց զարմանալով: «Այո, նոյն ինքը դա սե մարդն է» ասացի:

Զարմանալի դիտողութիւններ ունեն գերմանացիք, կարծես միմիայն ուղիտակ մարդիկ կարող են այդ տեսակ բաներ շինել:

Գանը այժմ վարձատրութեան խնդրին: Ինչպէս ասացի, արդէն ունի չքաղում մըցանալը այս անգամուհի համար չէր, բայց Քիւրքեմանի դործը արտադր կարգի լինելու համար, վարձատրութիւն էլ բարձրակրթ արտադրի համարելով մի բացարձակ կարգի կարեւորութիւնը վճարելով ընկերութիւնը, և հետեւաբար 8 անդամներից բաղկացեալ կազմուեցաւ մի մասնաժողով, որ մի անգամ նիստ անելով արժան գտնեց չքաղում մըցանակ տալու Քիւրքեմանին:

Նախ անգամ ընդունուեցաւ Քիւրքեմանը յիշեալ ընկերութեան, որ իր հրատարակած ամսական թերթին վերջին համարին մէջ ամենաբարձր զատարկութիւններով նկարագրեց նոյն երկրպետն ժողովում ապացուցուած Քիւրքեմանի տաղանդը և ըստ այնմ մըցանակ տալու արգելադրեց արժանաւորութիւնը: Վաղ ընդ հուլ Քիւրքեմանը կը տառնայ հրապարակաւ խոստացեալ մըցանակը, ի պատիւ հայ անուան և յարժանի վարձատրութիւն իր արուեստի կատարելութեան:

Կրօ

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Անիլիանականները, ինչպէս երեւում է, իրանց գլխավոր կենտրոնը Լիօնում հաստատեցին: Այդ տեղից փարիզ դրոււ են, որ վախճում են ճաշարները նոր դէպքերից:

—Պարիզից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Ռուսականները լրացրեցին պախարակում են Լուսանկարաններում գործարկող աշխատողներին և քարտիկը, որի վրա էլ գրաւ և Լուսանկարանի նկարում են Ֆրանսիայի գոյնով: Այդ պատճառով ժողովրդական լուսարուեստի միջոցով կանչեց իր մօտ աշխատողներին քարտիկների հրատարակչներին, նրա խօսակցութիւնը նրանց հետ անցաւ մնաց:

—Մեր նախկին խոսակցի համարում տարած էր փարիզից լրացրեցին ճաշարում այն բոլոր, որ Վիկտոր Հիւգոն խաղական համակարգներից հեռագրներ ստացաւ, որոնց մէջ նրան խնդրում էին միջնորդել աւստրիական կայսրի մօտ Օրէլ-Դանկին ներկու համար: Վիկտոր Հիւգոն դիմեց աւստրիական կայսրին մի նամակով արդէն, որի մէջ խնդրում է ներել Օրէլ-Դանկին:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Այսօր ատաղ շրջից յայտնուեցաւ հին թագաւորական պալատում, Գէմպոնիօրում, Լիօնի մօտ: Պալատի արևելեան թիւը քանդակ է, և բոլոր դուռն և շարունակում է աւերակները դործել: Վախճում են, որ կուշնայ պատկերների ամբողջ հաւաքածուն, որ ամենամշակութիւններից մէկն է, կը վաճառուի:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Պալատական յայտնուեցաւ է, որ Գլադստոն հրաժարվեցաւ գանձարանի կանցլերի պաշտօնից, և

որ Չայլերս, ներկայ գիտարական միջնորդը, կը փոխարինէ նրան: Գլադստոնը, այնու ամենայնիւ պահպանում է առաջին միջնորդի կուշումը: Էլի ուրիշ փոփոխութիւններ կը լինեն միջնորդութեան կազմակերպութեան մէջ:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Գէմպոնիօրում շրջից այլոց միայն պալատի աւերակներն են: Մի քանի պատկերները վնասվեցին և կրակի զոհ դարձան: Հրդեհի պատճառն էր ծառան, որ անզուգուրեմս վաղ էր գցել ձեռքը:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 2-ին: Գլադստոն կալանաւորված են երկու մարդիկ, որոնք կասկածվում են լուրջ ֆրեզերիկ կազմակերպչի տարածութեան մէջ: Նրանցից մէկը բանտարկված է եղել քաղաքական յանցանքների համար:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 3-ին: Մեր Էլիէին Վալդ այսօր ատաղ ժողովում է Լիօնի գոն և ուղարկում է Եգիպտոս ընդունելու եգիպտական դորքի հրամանատարութիւնը:

—Ամսթից հեռագրում են գեկտեմբերի 3-ին: Միջնորդական խաղաղահայտ Կոմիտեի մերձ ի մահ հիւանդ է:

—Փարիզից հեռագրում են գեկտեմբերի 3-ին: Հասարակական կարծիքը շատ լաւ վերաբերեց նորոգման Մանչեստրում Գերբի արտասանած ճառին և նրա միջնորդութեան մէջ մտնելու լուրին: Յոյս կայ, որ Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնները լուսանան: «Union general» բանկի դատը վերջացաւ, լիօնը կը յայտնվի գեկտեմբերի 8-ին (20-ին): Արաքսի գործերի միջնորդը բացարձակ է պահանջում չինական կառավարութիւնից չինական դորքերի Տօնիկում ներկայութեան պատճառով:

—Փարիզից հեռագրում են գեկտեմբերի 3-ին: Պատգամաւորների ժողովում Գերբիսոն, հասարակական աշխատանքների միջնորդը, մի ընդարձակ ճառի մէջ քննարկում էր 1879 թ-ին Ֆրէյսի-Նէի նախագիծով ընթացող հասարակական աշխատանքների անցեալը, ներկան և ապագան և վերջը ինքնուրուպ պատգամաւորների ժողովից չը կրճատել բնագիտը, որ կը նշանակէր պետութեան կրեդիտի վրա կասկած յարուցանել: Սակայն Կարնո, գեկտեմբերի, նոյնպէս պաշտպանում էր նախահաշիւը:

—«Temps» լրագիրը հաղորդում է միջնորդների խորհրդի մէջ կատարված մի անցքի մասին: Ծովային միջնորդը նախագիծ ներկայացրեց կրեդիտ պահանջելով Տօնիկին արշաւանքի համար: Գրեթէ հակառակ էր այդ նախագիծը պատգամաւորների ժողովին ներկայացնելու մտքին. միջնորդների մի մասը նախագիծ կողմն էր, միւս մասը հակառակ: Ծովային միջնորդը Ժորկերէր բարկացած գցեց նախագիծը կրակի մէջ և հրաժարական տուեց: Մինչև այժմ դեռ գործը չէ վճարված: Մալինիան, «Galignani Messenger» ամսագրի տեղեկանատուները մեռաւ և մի քանի միջին ընծայեց բարեգործական նպատակներով:

—Փարիզից հեռագրում են գեկտեմբերի 4-ին: Կրապոսկին և նրա կինը, ժենեւ ուղարկվելուց առաջ, Տօնոն կայարանում կալանաւորվեցան: Մի քանի ժամից յետոյ նրանք արձակեցին: Անիլիանականները երէկ զինամիտով ճալիքները ծանուցանեցին գլխավոր ատնը, որը վկայ էր անիլիանականների դատի ժամանակ: Փարիզի Բուսսոն գետին Օրլոյ արձակուրդ տալու Բուսսոնոն գնալու համար:

—Փարիզից հեռագրում են գեկտեմբերի 4-ին: Միջնորդային ընկերութեանը պատկանելու մասին դատը կը սկսի Լիօնում ուղղի դատարանի առաջ յանդիմար 6-ին: Վիճարանութիւնները մի քանի նիստեր կը գրանեն և մեծ հետաքրքրութիւն կը դարձնեն, բուն թագաւորութիւն թղթերի պատճառով, որոնք լոյս են գցում միջնորդային ընկերութեան կազմակերպութեան վրա: Կրապոսկին արձակուրդ լուրջ դեռ ևս չէ հաստատում, նրան կալանաւորեցին հանրապետութեան պրոկուրորի հրամանով:

—Լիօնից հեռագրում են գեկտեմբերի 4-ին: Վիճարան, գեկտեմբերի 16-ին, միջնորդների խորհրդի մէջ, որին նախագահում էր Թալուսին, Գերբի նշանակված էր զաղթականութիւնների միջնորդ, Կիմբերէյ—Հնդկաստանի, Հարթինգտոն—Արաքսիական, Չայլերս նշանակված էր գանձարանի կանցլեր:

—Հուլից հեռագրում են գեկտեմբերի 3-ին: Թագաւորը այցելեց Մեծ Խլխանների Կոնստանտին Երկրպետին և Կոնստանտին Կոնստանտինովիչին: Մեծ Խլխան Կոնստանտին Երկրպետին ցանկանում է տեսնել պապին հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԴԻ, 9 գեկտեմբերի: Պետական խորհուրդը որոշեց: «Բոլոր ջուրները, որոնք ապրանքներով ուղարկվում են արտասահման, վերցնել մաքսահարկը արտասահմանից յետ բերելու ժամանակ այն չափով, որ որոշված է քաղաքի ջուրների համար: Թող տալ ժամանակաւորապէս առանց մաքսահարկի յետ բերել մինչև 1883 թուի սեպտեմբերի 1-ը արտասահման ապրանքներով ուղարկված ջուրները, այն պայմանով որ ջուրները յետ դարձնվեն այն մարդկերանց անունով, որոնք ուղարկել են ապրանքներ, նոյն մաքսաների միջոցով, որոնցից անցել են ապրանքները, նրանց արտասահման տանելուց մի ամից յետոյ և բացի այդ դուրս տարված ջուրների 75% ոչ աւելի: Провит. Вѣстн. լրագիրը հաղորդում է, որ արարից փախած և սեպտեմբերի 16-ին ջիտայի մէջ բռնված քաղաքական յանցաւոր Մարիա Կոտլոմոնսկայա ներկայացվեցաւ նահանգապետ Խիւնզելին, որին կամենում էր յայտնութիւն անել: Կոտլոմոնսկայա արձանակ արձակեց գեկտեմբերի 10-ը: Բայց վերջը նշանաւոր հետեւանքներ չունեցաւ: Նոյեմբերի 17-ին Կոտլոմոնսկայա մահուան պատժի դատաւարովեցաւ, բայց այդ պատժը որոշմամբ փոխարինված է տաժանակիր աշխատանքներով մինչև մահ: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Նովոգորոդի նահանգապետ նշանակված է Վ. Օլոգոյի նահանգապետ Մոսկով, իսկ Վ. Օլոգոյի նահանգապետ նշանակված է Կորնիլիցին, որ Բուսսոնի գեկտեմբերի 10-ը անդամ էր: Պալատական միջնորդի գաւառները գնալու պատճառը, որ խօսակցութիւնների առարկայ է դարձել, որ դու հիւանդութիւնն է: Կոտլոմոնսկայայի հրապարակական ժողովին, որ Մոսկովի մէջ գտնված են ջիտայի Սօբոր անունով ժողովների պրոտոկոլները:

Ս. ՊԵՏԵՐՈՒԴԻ, 9 գեկտեմբերի: Եկատերինբուրգ-Տիւմենի ճանապարհը վճարված է կառուցանել պետական հաշուով:

ՍԻԲԻՐՍԿ, 9 գեկտեմբերի: Նահանգական գեկտեմբերի հարկի նոր բաժանումն է ընդունված և եկամուտների չափը բարձրացրած է 50%:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒԴԻ, 9 գեկտեմբերի: Այսօր բացվեցաւ լիւնային արդիւնաբերողների երկրորդ ժողովը:

ԲՈՒԴԱ-ՊԵՏՏ, 9 գեկտեմբերի: Միջնորդական խորհուրդը ճիշտա յայտնեց պատգամաւորների ժողովին, որ խաղաղութիւնը առ ժամանակ ապահովված է:

ՏՐԵՆՍ, 9 գեկտեմբերի: Այսօր Կախկին Օրբերդանկին, որ դաւադիրները առաջնորդ էր: Նա օգոստոսին Բուսսոն էր պատրաստում աւստրիական կայսրի Տրեյստ դալուց առաջ:

ԼՈՒՆՈՒՆ, 9 գեկտեմբերի: Առաջին միջնորդ ջիտայից հրապարակապէս կարծիք յայտնեց Անգլիայի հովանաւորութեան դէմ Եգիպտոսի վրա: Նա յոյս ունի, որ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ ծագած դժուարութիւնները աջորդութեամբ կը վերջանան:

ՎԻՆՆԱ, 9 գեկտեմբերի: Անգլիան հրապարակեց պետութիւններին կոնֆերանցիայի Գոնայ գետի հարցի վերաբերութեամբ: Կոնֆերանցիան կը դուրսարկի Լիօնում:

ՍՕՖԻԱ, 9 գեկտեմբերի: Խլխանի հիւանդութեան պատճառով ազգային ժողովի բացումն յետաձգված է: Կենտրալ Սօբորին աջողվեցաւ մեծացնել բնագիտը, այնպէս որ 9 միլիոն ֆրանկի գեկտեմբերի փոխարէն 3 միլիոն աւելորդ եկամուտ կը լինի:

ՓԱՐԻԶ, 9 գեկտեմբերի: «Union Generale» բանկի գլխավոր Բոսսոն և նրա օգնական Ֆեդեր գաղապարոված են իւրաքանչիւր 5 տարով կալանաւորման: Գաղապարային առողջութիւնը լուսանում է:

Թարգմար—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻ

